ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարատ 1-ն ԷԱՃԱՊՁԲ-2025/7-3-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Անջրաթափանց և տաք ձմեռային համազգեստ լուսարձակող դետալներով, փրկարարական աշխատանքի համար, նախատեսված է տարվա բոլոր եղանակների համար, սեռը՝ յունիսեքս, գույնը՝ կապույտ: Համազգեստը բաղկացած է տաբատից, բաճկոնից, կեպիից և գոտիից: Գործվածքի տեսակը՝ «rpeтa» անջրաթափանց ծածկույթով, գույնը՝ կապույտ: Բաճկոնի առաջամասի և թիկունքի ներդիրները մշակվում են անջրաթափանց կտորով երկկողմանի մգդակարված առնվազն 300 գրամ/մ2 խտությամբ սինտեպոնով, իսկ թևքերը և գլխանոցը՝ անջրաթափանց կտորով երկկողմանի մգդակարված առնվազն 200 գրամ/մ2 խտությամբ սինտեպոնով: Աստառը՝ 100 գրամ/մ2 (շեղումը՝ գրամ/մ2) մակերեսային խտությամբ սև գործվածքից: Օձիքը կտրված կանգունակով, որի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնին 5 հատ 15 մմ տրամագծով կոճգամներով ամրանում է գլխանոցը: Գլխանոցի ստորին հատվածում՝ լայնացող վերջավորություններին, մշակված են սև կպչուն ժապավեններ, որոնք միանում են իրար կենտրոնական կոճկվածքի ուղղությամբ: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական կոճկվածքով՝ երկկողմանի սև գույնի տրակտոր տեսակի երիզաշղթայով և երեքական կպչուն ժապավեններով: Կպչուն ժապավենները ձախ լանջափեշին մշակվում են ներսի կողմից, իսկ աջ լանջափեշին արտաքին կողմից՝ եզրակարից 1 սմ հեռավորությամբ: Բաճկոնի ստորին եզրաշերտով անցնում է քուղ՝ ելքային մասերում 7 սմ (շեղումը՝ ± 1 սմ) կախված վիճակում, ծայրերը պլաստիկ բռնակներով: Կրծքամասում մշակված են երկու վրադիր ծավալուն գրպաններ 14 սմ լայնությամբ (շեղումը՝ ± 1 սմ) և 16 սմ երկարությամբ (շեղումը՝ ± 1 սմ), կափույրներով: Ձախ գրպանի կափույրի վրա՝ ստորին եզրից 1 սմ հեռավորությամբ, կարվում են 13x2.5 սմ չափսով սև գույնի կպչուն ժապավեններ: Ձախ գրպանի

		կափույրի վրա տեղադրվում է 12.5x2.5 սմ չափով կպչուն ժապավեն «Արյան կարգ» տարբերանշանի համար։ Բաճկոնի աջ և ձախ կրծքամասերում մշակված են 14 սմ լայնությամբ և 16 սմ երկարությամբ ծոցագրպաններ։ Բաճկոնը ներսի կողմից գոտկատեղի ուղղությամբ մշակվում է անջրաթափանց արհեստական գործվածքից քամապաշտպան շերտով՝ 18-20 սմ լայնությամբ։ Այն եզրից մշակվում է 2-2.5 սմ լայնությամբ էլաստիկ ժապավենով, որը առաջամասում կոճկվում է 15 մմ տրամագծով 3 կոճակ-օղակով։ Առաջամասում մշակված են թեք կողային գրպաններ՝ երկկողմանի սև երիզաշղթայով փակվող։ Երիզաշղթան մշակվում է գրպանի եզրից 1-1.5 սմ խորությամբ՝ ներսի կողմից։ Աջ թևքին՝ ուսագլխից 7 սմ ներքև, ասեղնագործված է ԵՊԲՀ լոգոն։ Տարբերանշանների գունավորումները մինչ մատակարարումը համաձայնեցվում է Գնորդի հետ։ Բաճկոնի մեջքի կենտրոնական հատվածում՝ օձիքի միացման կարից 13 սմ հեռավորությամբ, սպիտակ թելով, 4x2.5x0.3 սմ (բարձրությունxլայնությունx հաստություն) չափսի տառատեսակով ասեղնագործված է ԵՊԲՀ լոգոն և «ԵՊԲՀ փրկարարական ջոկատ» արտահայտությունը։ Թևքի վերջավորությունը ներսի կողմից մշակված է 10 սմ երկարությամբ էլաստիկ տրիկոտաժե մանժետով (բազկակալով) կողից բթամատի բացվածքով։ Օձիքի մորթին առնվազը 800 գրամ/մ2 խտությամբ, խավի բարձրությունը՝ ոչ պակաս 12 մմ, գույնը սև, կոճկվում է բաճկոնին լրացուցիչ շերտին մշակված 5 օղակներով և բաճկոնին կարված 5 հատ 15 մմ տրամագծով կոճակներով։ Մորթե օձիքի վզատեղի եզրը եզրակարված է երեսացուի կտորի եզրաշերտով։ Գլխանոցը հանովի է, բաճկոնին միանում է առնվազն հինգ կոճակով և օղակով։ Բաճկոնի չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի կնքման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում։ Տաբատը՝ գործվածքի տեսակը՝ «оксв06с17», անջրաթափանց ծածկույթով, գույնը՝ կապույտ։ Տաբատը մշակված է գոտիով, առաջամասում կողային թեք ներկարված գրպաններով և ծնկակալներով։ Գուլֆիկը մշակված է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով։ Գոտին մշակված է 5 կամրջակով՝ մեկը գոտկատեղի հետնամասի կարի վրա, և գոտու չափսը կարգավորող 2 ախլակներով, որոնք կոճկվում են 1 օղակով և 2 հատ 15 մմ տրամագծով կոճակներով։ Կողային հատվածներում՝ ծնկամասից վերև, մշակված են ծավալուն եռածալ վրադիր գրպաններ՝ 20 սմ լայնությամբ և 24 սմ երկարությամբ, կափույրներով, որոնք ամրանում են կպչուն ժապավենով։ Գրպանի ծալքերի լայնությունը 4-5 սմ, ներքևից 2 սմ ամրակարված, իսկ գրպանի վերնամասը (բերնը) մշակված է 1 սմ լայնությամբ զարդակարով։ Տաբատի ետևամասի աջ կողմում ներկարված է 15x15 սմ չափսի գրպան՝ կափույրով։ Կափույրը կոճկվում է գաղտնի կոճկվածքով 1 օղակով և 15 մմ տրամագծով կոճակով։ Տաբատի ներդիրը մշակվում է առնվազն 200 գրամ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15 սմ բարձրության վրա։ Ներքին եզրերը մշակված են կապիչներով։ Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի կնքման օրվան հաջորդող հինգ

	աշխատանքային օրվա ընթացքում: Գլխարկը՝ կեպիի տեսքով, բաղկացած է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալ-ծոծրակամասից, որը մշակված է առնվազն 800 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, սև գույնի գործվածքային մորթաթաղանթով: Հովհարին միջադրված է առնվազն 3 մմ հաստության պլաստիկ ճկվող միջադիր: Կողամասերը մշակվում են առնվազն 3 մմ հաստության սոսնձային կտորից միջադիրով: Գլխարկաբոլորքի բարձրությունը ճակատային մասում՝ սկսած 53 չափսից 7.5 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 մմ: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 53 չափսից 8.2 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 մմ (շեղումը՝ ± 1 մմ): Աջ ականջակալին կարվում է 6-7 սմ երկարությամբ տիսմայից ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի եզրակարից դեպի ներս՝ առաջինը՝ 3 սմ, երկրորդինը՝ 3-4 սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա ամրացվում է 1 հատ կոճգամի ամրացող մասը: Ականջակալ-ծոծրակամասի ներսամասը 5-6 սմ կողմերով ուղղանկյունաձև, մգդակարված բիազով, ներսից մշակված առնվազը 100 գրամանոց սինտեպոնով: Գլխարկաբոլորքի կենտրոնում ասեղնագործված է ԵՊԲՀ լոգոն՝ շրջանաձև, 56 մմ տրամագծով (շեղումը՝ ± 1մմ), սև կտորի վրա գունավոր ասեղնագործված: Խորհրդանշանի ձևը կտրամադրվի Գնորդի կողմից: Հովհարի լայնությունը կենտրոնական մասում 7 սմ (շեղումը՝ ± 0.3 սմ): Գլխարկահատակի կենտրոնում՝ ներսի կողմից, կարվում է չափսը և արտադրողի անվանումը: Հովհարի եզրից 1 սմ խորությամբ մշակվում է զարդակար: Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի կնքման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված՝ առանձին շարվածքով: Գոտին արհեստական թելերից է գործված 50 մմ լայնությամբ և 2.5-3 մմ հաստությամբ, պաշտպանական գույնի (խակի) ժապավենից: Գոտու մեկ ծայրին երեք մետաղական գամով ամրացվում է երկսեպիկանի 1.5 մմ պատի հաստությամբ մետաղական ճարմանդ, իսկ մյուս ծայրը ֆիքսված մետաղական ամրակալ: Ամրակալից դեպի ներս 10 սմ հեռավորության վրա գոտու երկանքով մշակված են զուգահեռ մետաղական օղակներ՝ չափսերի կարգավորման համար, որոնց ներսի տրամագիծը 6 մմ, օղակների հեռավորությունը մեկը մյուսից 3-3.5 սմ:Օղակների քանակը կախված գոտի չափսերից: Յուրաքանչյուր զույգի օղակների միջև լայնակի հեռավորությունը՝ մետաղական ճարմանդի ամրացման սեպիկների միջև լայնությանը համարժեք: Գոտին պետք է ունենա արհեստական մանրաթելից գործված 2 հատ 2.5 սմ լայնության գոտեմակօղակ՝ մշակված մետաղական օղակներով: Գոտու վրա պետք է դրոշմված լինի չափսը: Փաթեթավորումը՝ թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Գնորդի պահանջով մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ,

	տրված արտադրողի կողմից Վաճառողին: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով դրանք վերացնել: Գնորդի պահանջով Վաճառողից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության և ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված կազմակերպությունից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Арарат 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2025/7-3-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	